ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 70-Ա

" 29 " հուլիսի 2013թ.

« ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 70-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն >> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2013թ. հուլիսի 25 -ի <<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին>> N 4 որոշումը և եզրակացությունը,**կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1. Լուսինե Լյուդվիգի Վարդանյանին 2013թ. հուլիսի 29-ից նշանակել «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

2. 2013թ. հուլիսի 29-ից լուծել «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն » ՓԲԸ տնօրենի պաշտոնակատար Վարդուհի Պետրոսյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Հիմք. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2013թ. հուլիսի 25-ի <<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին>> N4 որոշումը և եզրակացությունը, Լ. Վարդանյանի անձնական դիմումը:

3.Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ծատրյան Աշոտ	աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
Մարդյան Աշոտ	աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Կոզմանով Կառլեն	աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Վարդանյան Լուսինե	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն /ընդունող/
Պետրոսյան Վարդուհի	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար /հանձնող/

4.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2013թ. հուլիսի 29

ք. Կապան